



Հրատարակում է Գարակեօզեան Տան
Խնամակալութեան աջակցութեամբ:

Հրատարակչատան կողմէ

Այս հատորը նախատեսուած է դպրոցականներու համար:

Գիրքին համար հիմք հանդիսացած է

Մարօ Գալայճեան-Քիւրքճեանի եւ Յարութին Քիւրքճեանի
կողմէ պատրաստուած «Հայրենի աղբիւր»ի գրադարանի
առաջին գիրքը՝ «Տղու հոգի»ն, որ կը պարունակէ «խտացուած»
տարբերակները բուն պատմուածքներուն:

Այս հրատարակութեան մէջ քանի մը յաւելեալ խտացումներ եւս
եղած են: Ներառուած է միայն հեղինակի զաւակներուն մանկութիւնը
եւ անոնց պատանեկան արկածները ներկայացնող
պատմուածքներու բաժինը:

Հրատարակութեան ու խմբագրութեան վերաբերեալ

ՏՂՈՒՀՈԳԻ

Արաս հրատարակչություն
A r a s Y a y ı n c ı l ı k
İstiklal Caddesi, Hıdivyal Palas 231/Kat 1
34430 Tünel, Beyoğlu-İstanbul
Tel: (0212) 243 06 02
info@arasyayincilik.com
www.arasyayincilik.com
Sertifika No: 44967

ARAS – ԱՐԱՍ 327

ՏՂՈՒ ՀՈԳԻ
Արամ Հայկազ

Խմբագիր՝
Յարութիւն Քիւրքնեան

Կողմ եւ էջադրութիւն՝
Վահագն Քէշիշեան


Տպագրութիւն՝
Սենա Օֆսէթ

Օգոստոս 2025, Իսթանպուլ

ISBN 9786257460774

ՏՂՈՒՀՈԳԻ
Արամ Հայկազ






Արամ Հայկազ

Շապին Բարահիսար, 1900-1986, Նիւ Եորք

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տղու հոգի.....	11
Փափան	19
Տղաս	27
Խելը խրատն ի՞նչ ընէ.....	63
Մինքա եւ Թինքա.....	69
Ութ երեխայի եւ ինը երեխայի հանած աղմուկին միջեւ տարբերությունն չկայ... ..	83
Ապրող ծառ մը.....	99
Լակոտները մեծցան	111
Նամակ Աստուծոյ.....	121

ՏՂՈՒՀՈԳԻ



Շաբթուան մը պաղէն-անձրեւէն ետք,
անամպ երկինքին վրայ կը շողայ արեւը:
Ծառերու բողբոջները¹ պայթած են. եթէ
ուշադիր դիտես, կարծես կը տեսնես
տերեւներուն մեծնալը: Եթէ գիշերը
լռութեան մէջ ունկնդրես, թերեւս լսես վեր
խուժող աւիշին² աղմուկը:

Տղաս կիսամերկ փողոց է ինկած. մայրը
մտահոգ է:

- Պիտի պաղի՝ հիւանդանայ,–
գանգատեցաւ գրեթէ լացկամած,– հայրն
ես. բան մը չընես:
- Դուն ալ մայրն ես. դո՛ւն ի՞նչ ըրիր,– ըսի
կեղծ լռութեամբ.– յետոյ, ի՛նչ կ'ըլլայ

1 Բողբոջ. Ծիլ՝ ճիւղի վրայ:

2 Աւիշ. Բոյսերուն հիւթը, «արիւն»ը:

որ... անոնց արիւնը տաք է, արելը՝ ջերմ.
դիւրին-դիւրին պաղ չեն առնէր: Բայց եթէ
կ'ուզես, կ'երթամ ստուգելու՝ ի՛նչ բանի¹ են:

Դեռ դուռէն չէի ելած, տղաս ու Հանցը
հեւալով ներս ինկան:

- Փա՛, ըոսթ շինենք կոր. մաման ո՛ր է:
- Ներսն է. ի՛նչ ըոսթ, ի՛նչ բան. շո՛ւնչ առ:
- Կէնկով² ըոսթ շինենք կոր. մեծ կրակ մը
վառեցինք Քանըլիին բակը. ճեքին հաթ-
տակերը բերելու գնաց, ես փաթաթէսները
պիտի տանիմ՝ մոխիրի մէջ խորովենք:
Շորթին...
- Անգամ մը դուն հո՛ս եկուր, – տղուս
խանդավառութեան վրայ պաղ ջուր
թափեց մայրը՝ ամուր ձեռքով անոր վիզէն
բռնած՝ իրեն քաշելով. – դուն կրակի քով
գործ չունիս: Եթէ հաթ-տակի ըոսթ կ'ուզես,
ես կը շինեմ քեզի համար: Դեռ վիզիդ
վերքը նոր աղէկցուցինք:
- Օ՛, մա, փլի՛գ, մա՛, սատ զգուս կ'ըլլամ,
փլի՛հ՛գ աղուոր մամաս, աս՝ մէկ անգամ,
փլի՛հ՛գ:

1 Ի՛նչ բանի են. Ի՛նչ գործի վրայ են:

2 Կէնկ. Խումբ (անգլերէն):

Ես աչքով ըրի որ տեղի տայ:

- Աչքով-ունքով¹ մի՛ ըներ, – նեղուեցաւ ան.– Ինչ կ'ընէք՝ ըրէք. բայց եթէ գլխուն փորձանք մը գայ՝ ինձի մի՛ վազէք: Ես յոգներ եմ հիւանդ ու վէրք նայելէ:

Բայց հաշտութեան ծիածանը երեւցաւ. մայր ու տղայ համբուրուեցան: Տիկինը իր ձեռքով փաթաթէսները տոպրակը դրաւ, տուաւ տղուն:

- Կրակին մի՛ մօտենաք. միսն ու փաթաթէսը լան եփեցէք, հում չուտէք. հիւանդ կ'ըլլաք:
- Այո՛, մամաս.– համակ² գորով ու ժպիտ էր:

Երբ տղաս, հոգիին մէջ ամբողջ արեւ մը բռնած, ճամբայ ելաւ, Հանցը, մեր շունը, կլոր ու ողորկ մարմինը օրօրելով, ինկաւ ետեւէն: Արեւը կը շողար անոր սեւ, ողորկ մուշտակին վրայ, որ արծաթի պէս կը փայլփլէր:

- Վերջերս աս շունը շատ կը կերակրեն, շատ գիրուկցեր է. ուտելիքին մէկ ժումը կտրելու է, – խօսեցայ ես ինձի, ու դանդաղ քայլերով ուղղուեցայ դէպի տղոց զբօսատեղին:

1 Աչքով-ունքով ընել. Աչք-յօնքով նշաններ ընել:

2 Համակ. Ամբողջովին:

Նոր ծաղկած վայրի կեռասենիին տակ, տղաքը ամբարեր էին իրենց պաշարը, եւ կը սպասէին կրակին հասնելուն¹: Երջանիկ էին ու անհանդարտ՝ մօտակայ տանիքին վրայ աղմկող ճնճուկներու երամին² պէս:

Միայն Հանցը տխուր էր: Ականջները կախ, պոչը անշարժ, դէմքը ամպոտ ու լացկամած, կեցեր էր ծառի շուքին: Փորձեր էր հաթ-տակերը հոտուրտալ: Իր զգայուն, բարակ քիթը մօտեցուցեր էր որ հոտուրտայ՝ միայն մէկ անգամ, բայց տղաքը տեսեր էին, կասկածեր, յանդիմաներ, ու վիզէն բռնած՝ անդին նետեր էին:

- Ասոնք քուկո չեն, Հանց. անդին գնա:

Քովը գացի, ձեռքս դրի գլխուն, շոյեցի: Պոչը շարժեց անգամ մը երկուք, ինծի հասկցնելու համար, թէ դէմս բան մը չունէր: Այսուհանդերձ, հոգին նեղ էր:

- Տղա՛ք, զգո՛ւշ եղէք, ձեռք-ոտք չայրէք, ու դրացիներուն տունը կրակ չձգէք, – ազդարարեցի ես, ու երգի կտոր մը ծամելով՝ դարձայ տուն:

Տասը րոպէ չէր անցած՝ տղաս ու Հանցը խոհանոց մտան:

1 Կրակին հասնիլը. Տաքնալ-կարմրիլը:

2 Երամ. Թռչուններու խումբ:

Տղուս վրայ ակնարկ մը նետելով հասկցայ, որ չարաղէտ, ահաւոր¹ բան մը պատահած էր: Դէմքը մուր, հող, քրտինք էր. ստորին շրթունքը կը դողար ու շապիկին մէկ թելը պատռուած էր: Եթէ իր գիրուկ, կլոր ծնօտը սեղմած չըլլար այդքան ամուր, անպայման պիտի լար:

- Հոն եկուր տեսնեմ, տղան, ի՞նչ եղաւ, ի՞նչ պատահեցաւ, – ըսի, հանդարտութիւն կեղծելով. – սա քովս եկուր, տեսնեմ՝ ի՞նչ պատահեցաւ:

Շրթունքները քիչ մը եւս դողացին, ու լուռ՝ գլուխը դարձուց դէպի շունը:

- Հանցը...
- Հանցը..., – կրկնեցի ես հարցական:
- Հաթ-տակերը կերաւ:
- Չեփամ՞...
- Անոր համար ի՞նչ կարելորութիւն ունի: Չենք գիտեր ե՞րբ կերաւ. մենք ապուրով ու փաթաթէսներով զբաղած էինք, մէկ ակ տեսնենք՝ Հանցը կայ, հաթ-տակերը չկան:
- Ուտելը տեսա՞ք:
- Չէ՛, բայց երբ բերանը հոտուրտացինք՝ բերանէն հաթ-տակի հոտ կու գար: Յետոյ՝ ուրիշ մէկը չկար հոն իրմէ գատ:

1 Ահաւոր. Սարսափելի, շատ վախճալիք:

- Լա՛ւ,– ըսի ես ժպտելով.– ուրիշ անգամ նորէն կը շինէք: Այն անգամ Հանցը հետդ չես տանիր. իբր պատիժ կը կապենք հոս:

Յուսահատ՝ գլուխը շարժեց ժխտական:

- Ինչո՞ւ...
- Երբ տեսանք, որ հաթ-տակերը չկան՝ վէճ ունեցանք: «Չես գիտեր՝ ինչո՞ւ կը պահէք զայն,– ըսին.– վերջապէս գերմանացի շուն մըն է. ի՞նչ կը սպասես ա՛լ. անո՛ւնն իսկ գերմանական է. դեռ աղէկ որ Հիթլեր կամ Կէօրինկ¹ չէ... Ամերիկա կ'ապրի, ու գողութիւն կ'ընէ:» Պիտի ծեծէին: Կռուեցանք: Փաթաթէսի բաժինս առի՛ տուն եկայ...

Շապիկին պոչով բռնած էր տաք գետնախնձոր մը, այրած կեղեւով ու հաւանաբար հում միջուկով...

Հանգստացուցի զինքը ու ղրկեցի, որ լուացուի, մաքրուի: Երբ վերադարձա՛ւ ձեռքս դրի ուսին.

- Հանցը կը պատժենք որկամոլութեան² համար,– ըսի,– այս իրիկունն ու վաղը ուտելիք չ'ունենար: Արդէն շատ գիրցած է.

1 Հիթլեր, Կէօրինկ. Գերմանացի պետեր (այդ պահուն՝ Ամերիկան պատերազմի մէջ էր Գերմանիոյ դէմ):

2 Որկրամոլութիւն. Շատակերութիւն:

Թո՛ղ հասկնայ՝ ի՛նչ է եղեր գողութիւն ընելը:
Անպիտանը...

Այդպէս ալ ըրինք: Օրը շուտ անցաւ: Երկար
մտիկ ըրինք ծայնասփիւռը, եւ գիշերուան
վերջին լուրերը լսելով՝ պառկեցանք:



- Արան, ելի՛ր, տունը գող կայ,– փսփսուքով
կէս գիշերին արթնցուց զիս կինս:
- Ի՛նչ,– ցատկեցի ես,– գո՛ղ կայ... Հապա
շունը չհաջեց...
- Անպատճառ անօթի ձգելուդ համար
խռոված է՞¹. Լսէ՛, խոհանոցը մէկը կայ:

Սիրտս կը բաբախէր², ծունկերս քիչ մը կը
դողային:

«Գողերը կիները չեն սպաններ, դո՛ւն գնա»,
պիտի ըսէի, բայց ամչցայ: Անգամ մը երկուք
բարձրաձայն հազացի՛ զգուշացնելու համար
գողը: Նրբանցքին լոյսի կոճակը դարձուցի
եւ «Հայր մեր որ յերկինս ես» ըսելով՝ քալեցի
դէպի խոհանոց:

1 Խռովիլ. Նեղուիլ (մէկէն):

2 Բաբախել. Ջարնել: